

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

*2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները	6
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ	7
4. Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	14
5. Հասույթ	15
6. Վաճառքի ինքնարժեք	18
7. Այլ եկամուտ	18
8. Վարչական ծախսեր	18
9. Այլ ծախսեր	19
10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր	19
11. Շահութահարկ	19
12. Հիմնական միջոցներ	23
13. Դուստր ընկերության օտարում	25
14. Տրամադրված փոխառություններ	27
15. Կանխավճարներ	28
16. Ներդրումներ	28
17. Պաշարներ	28
18. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	29
19. Բանկային ավանդներ	29
20. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	29
21. Կապիտալ և պահուստներ	29
22. Ստացված վարկեր և փոխառություններ	30
23. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	33
24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	33
25. Հանձնառություններ	40
26. Դուստր ընկերության ձեռքբերում	40
27. Պայմանական դեպքեր	40
28. Կապակցված կողմեր	41

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության
Բաժնետիրոջը և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների վերաբերյալ Էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր Էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԻ կանոնագիրք), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի Էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին, և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԷՄՍԻ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Տնօրենների Խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած Եական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է իմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և իմբի գործունեության հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների Խորհուրդը պատասխանատու է իմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են Եական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի Եական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են Եական, երբ խելամոռի են կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- ▶ Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների Եական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով Եական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ▶ Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- ▶ Չնայած ներքին հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:
- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Չնայած ներքին համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ▶ Պլանավորում և իրականացում ենք խմբի աուդիտը խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով՝ որպես համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու հիմք: Մենք պատասխանատու ենք աուդիտորական աշխատանքների ուղղորդման, ղեկավարման և վերանայման համար՝ խմբի աուդիտի իրականացման նպատակով: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Տնօրենների Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ և Ինգ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝
30 հունիսի, 2025թ.



Էրիկ Չայրապետյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

հազ. դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	45,199,532	42,633,684
Ոչ նյութական ակտիվներ և գույքի		31,664	408,946
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		-	23,854
Տրամադրված փոխառություններ	14	4,137,844	7,968,285
Հետաձգված հարկային ակտիվ	11	278,176	1,079,646
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	15	3,083,416	5,931,061
Ներդրումներ	16	223,799	106,078
Վարկի հետաձգված նախնական վճար		73,277	-
Ոչ ընթացիկ ակտիվներ		53,027,708	58,151,554
Պաշարներ	17	832,061	981,047
Տրամադրված փոխառություններ	14	2,694,051	933,299
Կանխավճարներ	15	-	2,000
Վաճառքի համար պահվող ակտիվներ		766	1,137
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	78,334
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18	5,421,488	3,815,889
Բանկային ավանդներ	19	1,234,384	202,961
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20	114,925	461,284
Ընթացիկ ակտիվներ		10,297,675	6,475,951
Ընդամենը ակտիվներ		63,325,383	64,627,505
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		7,504,726	7,814,628
Կապիտալի բաշխում		(4,253,051)	(10,412,137)
Վերագնահատման պահուստ		9,609,098	11,024,753
Այլ պահուստներ		850,074	836,358
Զբաղիված շահույթ		15,824,810	19,620,047
Խմբի սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ		29,535,657	28,883,649
Զիսկող բաժնեմասեր		545,984	832,108
Ընդամենը սեփական կապիտալ	21	30,081,641	29,715,757
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	22	22,669,094	10,352,600
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	80,422	788,669
Վարձակալության գծով պարտավորություններ		-	11,388
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	25	358,667	150,570
Ոչ ընթացիկ պարտավորություններ		23,108,183	11,303,227
Վարկեր և փոխառություններ	22	5,537,214	18,103,707
Վարձակալության գծով պարտավորություններ		-	13,650
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	23	4,504,526	5,435,743
Ընթացիկ հարկային պարտավորություններ		566	11,255
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	25	93,253	44,166
Ընթացիկ պարտավորություններ		10,135,559	23,608,521
Ընդամենը պարտավորություններ		33,243,742	34,911,748
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		63,325,383	64,627,505

Հաստատվել և ստորագրվել է խմբի ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 30-ին:

Սուրեն Կարայան
Գլխավոր տնօրենԱրուսյակ Ազիզյան
Գլխավոր հաշվապահ1-28 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների
անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն**2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

հազ. դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Հասույթ	5	17,148,249	22,463,719
Վաճառքի ինքնարժեք	6	(11,771,382)	(17,446,870)
Համախառն շահույթ		5,376,867	5,016,849
Օգուտ դուստր ընկերության վաճառքից	13	4,748,435	–
Այլ եկամուտ	7	752,368	420,496
Վարչական ծախսեր	8	(2,121,086)	(1,989,996)
Իրացման ծախսեր		(55,802)	(8,141)
Այլ ծախսեր	9	(546,147)	(464,350)
Անոցիացված ընկերության շահույթի կամ վնասի բաժին՝ հաշվառված բաժնեմասնակցության մեթոդով		(7,587)	–
Հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ	12	–	(10,625,613)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		8,147,048	(7,650,755)
Ֆինանսական եկամուտ	10	2,686,303	1,938,564
Ֆինանսական ծախսեր	10	(1,957,546)	(3,662,944)
Չուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)		728,757	(1,724,380)
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկ		8,875,805	(9,375,135)
Շահութահարկի գծով եկամուտ/(ծախս)	11	(777,560)	1,328,692
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		8,098,245	(8,046,443)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հողվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Հիմնական միջոցների վերագնահատում	12	–	3,831,305
Համապատասխան շահութահարկ	11	–	(689,635)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա համար առանց շահութահարկի		–	3,141,670
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		8,098,245	(4,904,773)
Շահույթ/(վնաս) վերագրելի՝			
Խմբի բաժնետիրոջը		8,066,567	(7,928,411)
Չհսկվող բաժնեմաս		31,678	(118,032)
		8,098,245	(8,046,443)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կապիտալի բաշխում	Այլ պահուստներ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Խմբի բաժնետիրոջը	Զուտ բաժնեմասեր	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	7,814,628	(10,217,922)	797,150	8,487,254	31,470,410	38,351,520	676,936	39,028,456
Շահույթ/(վնաս) տարվա համար	-	-	-	-	(7,928,411)	(7,928,411)	(118,032)	(8,046,443)
Այլ բաշխումներ	-	-	39,208	-	(39,208)	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-	-	-	-
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	3,105,792	35,578	3,141,370	-	3,141,370
Վերագնահատված հիմնական միջոցների օտարում	-	-	-	(568,293)	568,293	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	39,208	2,537,499	(7,363,748)	(4,787,041)	(118,032)	(4,905,073)
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ								
Շահաբաժինների բաշխում	-	-	-	-	(4,597,564)	(4,597,564)	-	(4,597,564)
Այլ բաշխումներ	-	(194,215)	-	-	110,949	(83,266)	273,204	189,938
Ընդամենը Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	-	(194,215)	-	-	(4,486,615)	(4,680,830)	273,204	(4,407,626)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,814,628	(10,412,137)	836,358	11,024,753	19,620,047	28,883,649	832,108	29,715,757
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	7,814,628	(10,412,137)	836,358	11,024,753	19,620,047	28,883,649	832,108	29,715,757
Շահույթ տարվա համար	-	-	-	-	8,066,567	8,066,567	31,678	8,098,245
Այլ բաշխումներ	-	-	13,716	-	(13,716)	-	-	-
Վերագնահատված հիմնական միջոցների օտարում	-	-	-	(1,415,655)	1,415,655	-	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	13,716	(1,415,655)	9,468,506	8,066,567	31,678	8,098,245
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ								
Շահաբաժինների բաշխում	-	-	-	-	(7,050,000)	(7,050,000)	-	(7,050,000)
Բաժնետիրական կապիտալի նվազում	(309,902)	-	-	-	-	(309,902)	-	(309,902)
Այլ բաշխումներ	-	(54,657)	-	-	-	(54,657)	(59,969)	(114,626)
Դուրսը ընկերությունից դուրսգրում	-	6,213,743	-	-	(6,213,743)	-	(257,833)	(257,833)
Ընդամենը Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	(309,902)	6,159,086	-	-	(13,263,743)	(7,414,559)	(317,802)	(7,732,361)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,504,726	(4,253,051)	850,074	9,609,098	15,824,810	29,535,657	545,984	30,081,641

**Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Շահույթ/(վնաս) տարվա համար	8,098,245	(8,046,443)
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով		
Օգուտ դուստր ընկերության վաճառքից	(4,748,435)	-
Կապիտալի մեթոդով հաշվառվող ասոցիացված ընկերության շահույթի կամ վնասի բաժինը	7,587	-
Ոչ նյութական ակտիվների դուրսգրում	-	6,250
Մաշվածություն և ամորտիզացիա	2,758,583	2,821,549
Ֆինանսական երաշխավորության գծով եկամուտ	(31,376)	-
Պաշարների և վարկային կորուստների գծով (արժեզրկում)/ արժեզրկման հակադարձում	15,381	-
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	(48,499)	433,432
Հիմնական միջոցների վերագնահատմից կորուստ	-	10,625,612
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից եկամուտ	(33,222)	96,909
Չուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	(728,757)	1,724,380
Շահութահարկի գծով ծախս/(եկամուտ)	777,560	(1,328,692)
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.		
Պաշարներ	(96,841)	(271,301)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(675,960)	108,438
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	483,551	(318,074)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	5,777,817	5,852,060
Վճարված շահութահարկ	(225,317)	(414,912)
Վճարված տոկոսներ	(1,927,227)	(2,057,881)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	3,625,273	3,379,267
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(6,587,948)	(7,870,012)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(10,317)	(6,233)
Դուստր ընկերությունների վաճառքի համար ստացված զուտ մուտքեր	-	1,045,236
Բանկային ավանդների տեղաբաշխում	(14,904,000)	(3,875,000)
Մուտքեր բանկային ավանդներից	13,590,000	4,910,967
Տրամադրված փոխառություններ	(588,653)	(2,219,596)
Տրամադրված փոխառությունների մարում	3,219,252	1,038,691
Ստացված տոկոսներ	423,070	376,343
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	(4,858,596)	(6,599,604)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	20,432,837	7,520,723
Վարկերի և փոխառությունների մարում	(18,984,534)	(4,899,413)
Վարձակալության վճարումներ	(15,460)	(19,547)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր	1,432,843	2,601,763
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	199,520	(618,574)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	461,285	1,066,892
Դուստր ընկերության օտարում	(493,609)	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(52,270)	12,966
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	114,925	461,284

1. Հիմնական գործունեության նկարագրություն

ա) Տեղեկատվություն խմբի վերաբերյալ

«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ-ն («Ընկերություն») և վերջինիս դուստր ընկերությունները («Խումբ») իրենցից ներկայացնում են բաց և փակ բաժնետիրական ընկերություններ՝ Հայաստանի Հանրապետության Զաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Հրազդան, Գործարանային փ. 1:

Խմբի հիմնական գործունեությունն էլեկտրաէներգիայի արտադրությունն է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կայաններում: Արտադրված էլեկտրաէներգիան վաճառվում է հիմնականում երկու խոշոր գնորդներին՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին և Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ-ին:

Խմբի մայր կազմակերպությունը «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն է: Խմբի վերջնական հսկող անձն է պրն. Սամվել Կարապետյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 28-ում:

բ) Գործարար միջավայրը Հայաստանում

Խմբի գործունեությունը հիմնականում գտնվում է Հայաստանում: Հետևաբար, Խումբը ենթարկվում է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաներին, որոնք արտահայտում են զարգացող շուկայի բնութագրերը: Իրավական, հարկային և կարգավորող դաշտերը շարունակում են զարգանալ, սակայն ենթարկվում են տարաբնույթ մեկնաբանությունների և պարբերական փոփոխությունների, որոնք այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ միասին նպաստում են մարտահրավերներին, որոնց բախվում են Հայաստանում գործող կազմակերպությունները: Բացի այդ, 2020 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության բռնկումը, որին հաջորդել է վիճելի Լեռնային Ղարաբաղի տարածքների շուրջ հրադադարի պայմանավորվածությունը, Հայաստանի Հանրապետության տարածքում հակամարտության հետագա սրումը էլ ավելի են մեծացրել անորոշությունը բիզնես միջավայրում:

Ուկրաինայի պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ Ռուսաստանի և Բելառուսի, ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների դեմ հայտարարել են խիստ տնտեսական պատժամիջոցներ: Պատերազմի սկզբից ի վեր ռուսական ռուբլու զգալի անկայունություն է նկատվել արտաթույլների նկատմամբ, ինչպես նաև Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի անկում: Իրավիճակը դեռ շարունակվում է, բայց դա արդեն իսկ հանգեցրել է հոլմանիտար ճգնաժամի և Ուկրաինայում, Ռուսաստանում ու մնացած աշխարհում հսկայական տնտեսական կորուստների: Ուկրաինան և Ռուսաստանը Հայաստանի կարևոր առևտրային գործընկերներն են:

Պատերազմի հետևանքով ոչ ռեզիդենտների (հատկապես Ռուսաստանից) ներհոսք եղավ Հայաստան՝ նպաստելով Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական մուտքերի ծավալների զգալի ավելացմանը և քարտային գործարքների ակտիվացմանը, ինչը դրական ազդեցություն ունեցավ Հայաստանի վրա: Խմբի ղեկավարությունը վերահսկում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Զանի որ պատերազմը դեռ շարունակվում է, անհնար է արժանահավատորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը դա կարող է ունենալ Խմբի բիզնեսի վրա, քանի որ ընդհանուր առմամբ տնտեսության վրա ազդեցության մեծության վերաբերյալ անորոշություն կա:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ղեկավարության կողմից Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի լավագույն գնահատականը: Ապագա բիզնես միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

ա) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման առկա ստանդարտների հետևյալ փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2024թ. հունվարի 1-ին սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝

- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում,
- ՖՀՄՍ 16 ստանդարտի փոփոխություններ. Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներում,
- Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ – փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում:

Վերոնշյալ ոչ մի փոփոխություն նշանակալի ազդեցություն չի ունեցել Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ հումբը իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), որը հանդիսանում է հմբի ֆունկցիոնալ արժույթը և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ: Այս ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կլորացված են մոտ հազարերորդականներով, եթե այլ բան նշված չէ:

դ) Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով:

ե) Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս հումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- ▶ 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված),
- ▶ 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- ▶ 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

ե) Իրական արժեքի չափում (շարունակություն)

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Լրացուցիչ տեղեկատվությունը իրական արժեքի գնահատման վերաբերյալ ներկայացված է Ծանոթագրություն 24-ում:

զ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները «ՖՀՄՍ» պահանջներին համապատասխան պատրաստելու համար հստակ ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հիմնական միջոցների մաշվածության հետ կապված հաշվապահական հաշվառման գնահատումների կիրառման ժամանակ կատարված ղեկավարության ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 12-ում «Հիմնական միջոցներ»:

Տեղեկատվությունը կապիտալի բաշխումների հետ կապված հաշվապահական հաշվառման սկզբունքների կիրառման ժամանակ ղեկավարության կողմից կատարված ենթադրությանների վերաբերյալ, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծանոթագրություն 21-ում «Կապիտալ և պահուստներ»:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները հետևողականորեն կիրառվել են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Համախմբման հիմունքներ

(i) Բիզնես միավորումներ

Բիզնես միավորումները հաշվառվում են կիրառելով ձեռքբերման մեթոդը ձեռքբերման ամսաթվի դրությամբ, որն այն ամսաթիվն է, երբ վերահսկողությունը փոխանցվում է հմբին:

Խումբը գոլովիլի չափումն իրականացնում է ձեռքբերման ամսաթվին որպես՝

- ▶ Փոխանցված հատուցման իրական արժեք, գումարած,
- ▶ Ձեռք բերվող կազմակերպությունում չվերահսկող բաժնեմասերի ճանաչված գումարը, գումարած,
- ▶ Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում՝ ձեռքբերվող:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

ա) Համախմբման հիմունքներ (շարունակություն)

կազմակերպությունում նախկինում գոյություն ունեցող բաժնեմասը, հանած

- ▶ Ձեռքբերված որոշելի ակտիվների և ստանձնած պարտավորությունների զուտ ճանաչված գումարը (որպես կանոն՝ իրական արժեքը):

Երբ տարբերությունը բացասական է, գեղչով ձեռքբերումից օգուտը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխանցված հատուցումը չի ներառում նախկինում գոյություն ունեցած հարաբերությունների մարմանը վերաբերող գումարները: Նման գումարները որպես կանոն ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Գործարքի հետ կապված ծախսերը, բացառությամբ պարտքային կամ բաժնային արժեթղթերի թողարկման հետ կապված ծախսերի, որոնք հումբը կրում է բիզնես միավորման հետ կապված, ծախսագրվում են կատարվելու ժամանակ:

(ii) Հսկող բաժնեմաս

Հսկող բաժնեմասերը չափվում են ձեռք բերվող կազմակերպության որոշելի զուտ ակտիվներում չհսկող բաժնեմասի համամասնությամբ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

(iii) Դուստր ընկերություններ

Դուստր ընկերությունները խմբի կողմից հսկվող ընկերություններ են: Խումբը հսկողություն ունի ընկերության նկատմամբ, երբ այդ ընկերությունում իր ներգրավվածության արդյունքում այն ունի յփոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն և ընկերության նկատմամբ իր իշխանության միջոցով այդ հատույցների վրա ազդելու կարողություն: Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ հսկողությունը սկսելու պահից մինչև հսկողության դադարեցումը: Անհրաժեշտության դեպքում դուստր ընկերությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կատարվում են փոփոխություններ՝ խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Դուստր ընկերությունում չհսկող բաժնեմասերի նկատմամբ կիրառելի վնասը բաշխվում է չհսկող բաժնեմասերին նույնիսկ եթե դրա արդյունքում չհսկող բաժնեմասերի մնացորդը դառնում է բացասական:

(iv) Մասնակցություններ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտներում

Խմբի մասնակցությունները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտներում իրենցից ներկայացնում են մասնակցություններն ասոցիացված ընկերություններում:

Ասոցիացված կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնց նկատմամբ խումբն ունի նշանակալի ազդեցություն, սակայն որոնցում չի իրականացնում հսկողություն կամ համատեղ հսկողություն ֆինանսական և գործառնական քաղաքականությունների նկատմամբ: Նշանակալի ազդեցությունը ենթադրվում է այն դեպքում, երբ խմբին են պատկանում մեկ այլ ընկերության քվեարկության իրավունք տվող ձայների 20%-ից 50%:

Ասոցիացված ընկերություններում մասնակցությունները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են խմբի մասնաբաժինը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտների շահույթում կամ վնասում և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այն ճշգրտումներից հետո, որոնք կատարվում են ներդրման օբյեկտի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը խմբի կողմից օգտագործվողին համապատասխանեցնելու համար՝ սկսած այն ամսաթվից, երբ սկսում է գործել նշանակալի ազդեցությունը կամ համատեղ հսկողությունը, մինչև այն ամսաթիվը, երբ նշանակալի ազդեցությունը կամ համատեղ հսկողությունը դադարում է:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

ա) Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Երբ խմբի մասնաբաժինը վնասում գերազանցում է վերջինիս մասնակցությունը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտում, մասնակցության հաշվեկշռային արժեքը, ներառյալ երկարաժամկետ ներդրումները, նվազեցվում է գրոյի և հետագա վնասի ճանաչումը դադարեցվում է, այն ճանաչվում է միայն այն չափով, որով խումբը ստանձնել է պարտավորություն կամ կատարել է վճարումներ ներդրման օբյեկտի անունից:

(v) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ

Ներխմբային հաշվարկների մնացորդները և գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

(vi) Ակտիվների խմբի ձեռքբերում

Եթե խումբը ձեռք է բերում ակտիվ կամ ակտիվների խումբ, ներառյալ՝ ստանձնած պարտավորությունները, որոնք չեն կազմում ձեռնարկատիրական գործունեություն, ապա նման գործառնությունները հաշվառվում են որպես ակտիվի ձեռքբերման գործառնություններ, որոնց շրջանակներում ձեռքբերման արժեքը բաշխվում է խմբի կազմի մեջ մտնող առանձին որոշելի ակտիվների և պարտավորությունների վրա՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքներին համամասնորեն: Ձեռնարկատիրական գործունեությունը գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջություն է, որը կարելի է իրականացնել և կառավարել՝ ուղղակիորեն ներդրողներին (կամ այլ սեփականատերերին, անդամներին կամ մասնակիցներին) շահաբաժինների, ծախսումների տնտեսման կամ այլ տնտեսական օգուտների տեսքով հատույց ապահովելու նպատակով:

(vii) Հսկողության կորուստ

Հսկողությունը կորցնելիս խումբն ապաճանաչում է դուստր ընկերության ակտիվները և պարտավորությունները, չհսկող բաժնեմասերը և դուստր ընկերությանը վերաբերող սեփական կապիտալի այլ բաղադրիչները: Հսկողության կորստի արդյունքում առաջացող ավելցուկը կամ պակասուրդը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե խումբը պահպանում է մասնակցություն նախկին դուստր ընկերությունում, այն չափվում է իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ խումբը կորցնում է հսկողությունը: Հետագայում այն հաշվառվում է որպես բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտ կամ որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ՝ կախված պահպանված ազդեցության չափից:

բ) Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ի (գ) կետում:

գ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ընդգրկում են.

- ▶ Տոկոսային եկամուտ,
- ▶ Տոկոսային ծախս,
- ▶ Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

գ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր (շարունակություն)

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը գեղչում է ճիշտ մինչև՝

- ▶ Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ,
- ▶ Ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Փոխարժեքային տարբերությունից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս կախված այն հանգամանքից թե որ դիրքում են կատարվում արտարժույթի փոփոխությունները՝ զուտ օգուտի, թե՛ զուտ վնասի:

Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով, փոխարկվում են կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր ՀՀ դրամ 404.79, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ):

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

դ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Եուրոյան ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է հաշվեկշռային մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

դ) Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ՝

- ▶ Երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գույքի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի/վնասի, ոչ էլ հարկվող շահույթի/վնասի վրա,
- ▶ Համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել մայր կազմակերպության, ներդրողի կամ վենչուրային ներդրողի կողմից, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- ▶ Երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի/վնասի, ոչ էլ հարկվող շահույթի/վնասի վրա,
- ▶ Համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն տեսանելի ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կմարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Հետաձգված հարկը, որը վերաբերվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներին կամ սեփական կապիտալի հոդվածներին, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում, և ոչ թե շահույթում կամ վնասում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների հետ հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

դ) Հարկում (շարունակություն)

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, կճանաչվեն հետագայում փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում:

Ճշգրտումը կդիտարկվի որպես նվազեցում գուդվիլից (քանի դեռ այն չի գերազանցում գուդվիլի

արժեքը), եթե այն տեղի է ունեցել չափման ժամանակաշրջանի ընթացքում, կամ կճանաչվի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե տեղի է ունեցել չափման ժամանակաշրջանից դուրս:

Ապագա հարկվող շահույթի առաջացման մասին ենթադրությունները կախված են Ղեկավարության՝ ապագա դրամական հոսքերի գնահատումներից: Ապագա հարկվող շահույթի այս գնահատումները հիմնված են գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վրա (որոնց վրա ազդում են արտադրության և վաճառքի ծավալները, ապրանքների գները, պահուստները, գործառնական ծախսերը, փակման և վերականգնողական ծախսերը, կապիտալ ծախսումները, շահաբաժինները և այլ կառավարչական գործարքները): Ապագա դրամական միջոցների հոսքերի և հարկվող շահույթի՝ գնահատումներից նշանակալի տարբերությունը կազդի հաշվետու ամսաթվի դրությամբ խմբի զուտ հետաձգված հարկային ակտիվների օգտագործման հնարավորության վրա:

ե) Հիմնական միջոցներ

(i) Ծանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են վերագնահատված արժեքով՝ հանած հետագայում կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը Էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է պարտքային մնացորդ վերագնահատման պահուստում:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, ապա այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ, և ճանաչվում է զուտ հիմունքով այլ եկամուտ/այլ ծախս հոդվածում շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվի վաճառքի դեպքում վերագնահատման պահուստում որպես վերագնահատումից աճ ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ հստակ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

ե) Հիմնական միջոցներ (շարունակություն)

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական ստացման մոդելը: Հոլատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են նշանակալի հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

–Շենքեր	2,5–ից 80 տարի
–Շինություններ և մեխանիզմներ	2,5–ից 50 տարի
–Մեքենաներ և սարքավորումներ	2,5–ից 7 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

զ) Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր: Արտադրված պաշարների և անավարտ արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ հիմք ընդունելով արտադրական նորմատիվային հզորությունը:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

է) Ոչ նյութական ակտիվներ

Գուղվիլ

Գուղվիլը, որն առաջանում է դուստր կազմակերպությունների ձեռքբերման արդյունքում, չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Լիցենզիա և այլ ոչ նյութական ակտիվներ

Լիցենզիան և խմբի կողմից ձեռքբերված այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի (բացառությամբ գուղվիլի) օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություններ (շարունակություն)

Ե) Ոչ նյութական ակտիվներ (շարունակություն)

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- ▶ Լիցենզիա 7 տարի,
- ▶ Այլ 3-ից 7 տարի:

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում:

ը) Կանոնադրական կապիտալ

Խմբի բաժնեմասերը ենթակա են մարման մասնակցի ընտրությամբ՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Խումբը պարտավոր է վճարել դուրս եկող մասնակցին վերջինիս դուրս գալու տարվա Խմբի զուտ ակտիվների նրա բաժնեմասը դրամական միջոցներով, կամ մասնակցի համաձայնության դեպքում բնաիրային տեսքով:

ՀՀՍՍ 32 «Ֆինանսական գործիքներ. Ներկայացում» համաձայն՝ բաժնետերերին վերագրելի զուտ ակտիվները դասակարգվում են որպես սեփական կապիտալ այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Խմբի վերադարձելի ֆինանսական գործիքները բավարարում են որպես սեփական կապիտալ ներկայացում ՀՀՍՍ 32-ի բոլոր պահանջները:

թ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ներկա պահին ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղջման մինչև հարկումը դրույքով, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և այդ պարտավորության հատուկ ռիսկերը: Չեղջի գծով ծախսը ճանաչվում է ֆինանսական ծախս:

ժ) Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ

Տրամադրված ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը Խումբը սկզբնական ճանաչում է երաշխավորության իրական արժեքով և հետագայում չափում է ՀՀՍՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստի գումարից և սկզբնապես ճանաչված գումարի ու, կիրառելի լինելու դեպքում, ՀՀՍՍ 15-ի համաձայն ճանաչված եկամտի կուտակային գումարի տարբերությունից առավելագույնով:

Երբ Խումբը տրամադրում է ֆինանսական երաշխավորություն կապակցված կողմին նույնիսկ առանց հատուցման, համարվում է, որ մայր կազմակերպությունը գործում է բաժնետիրոջ կարգավիճակով և ֆինանսական երաշխավորության տրամադրումը ճանաչվում է որպես կապիտալի բաշխում:

4. Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել, գնահատվում են Ընկերության կողմից՝ ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը որոշելու համար: Ինչպես նկարագրված է վերոնշյալ հատվածում, այն ներառելու է ստանդարտներ և փոփոխություններ, որոնք արդեն ուժի մեջ կլինեն՝ հիմնված նոր ստանդարտների կամ փոփոխությունների վրա, սակայն տեղական մակարդակով հաստատումը դեռևս ընթացքի մեջ է կամ կարող է հանգեցնել ավելի ուշ ուժի մեջ մտնելու:

4. Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

- ՖՀՄՍ 18 ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում

2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԽ -ն հրապարակել է ՖՀՄՍ 18 ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ:

Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել՝ ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Այն նաև պահանջում է նոր, ղեկավարության կողմից սահմանած կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների (PFS) և ծանոթագրությունների «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՍ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում:

ՖՀՄՍ 18 ստանդարտը և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՖՀՄՍ 18-ը կիրառվելու է հետընթաց: Ներկայումս Ընկերությունն աշխատում է բացահայտել այն բոլոր փոփոխությունները, որոնք ազդեցություն կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 ստանդարտներում – ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ: Ընկերությունը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որը փոփոխությունը կունենա հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:
- ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ - Փոխանակելիության բացակայություն, որը հստակեցնում է, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշել սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները եական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Հասույթ

(ա) Հասույթի ուղղություններ

Խումբը հասույթը հիմնականում ստանում է իր հաճախորդներին Էլեկտրաէներգիայի և հզորության վաճառքից:

հազ.դրամ	2024թ.	2023թ.
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	17,148,249	22,463,719
Ընդամենը հասույթ	17,148,249	22,463,719

5. Հասույթ (շարունակություն)

(բ) Հաճախորդների պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ ծառայությունների հիմնական տեսակների և հասույթի ճանաչման ժամկետների:

հազ.դրամ	2024թ.	2023թ.
Ծառայությունների հիմնական տեսակներ		
Էլեկտրաէներգիայի վաճառք	15,098,611	20,485,832
Հզորության վաճառք	1,829,842	1,713,414
Էլեկտրաէներգիայի փոխանցման և այլ ծառայություններ	219,796	264,473
	17,148,249	22,463,719
Հասույթի ճանաչման ժամկետներ		
Ժամանակի ընթացքում փոխանցված ապրանքներ	17,148,249	22,463,719
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	17,148,249	22,463,719

(գ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականությունը

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում սահմանված հատուցման հիման վրա: Խումբը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ հսկողությունը:

5. Հասույթ (շարունակություն)

(գ) Կատարման պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականությունը (շարունակություն)

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման պարտականությունների բնույթի և կատարման ժամկետների, այդ թվում՝ վճարման նշանակալի պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Ծառայության տեսակը	Կատարման պարտականությունների բնույթը և կատարման ժամկետները ներառյալ՝ վճարման նշանակալի պայմանները	Հասույթի ճանաչման քաղաքականությունը
Էլեկտրաէներգիայի վաճառք	Էլեկտրաէներգիայի վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է հաճախորդին Էլեկտրաէներգիա վաճառելուց հետո: Վաճառքի պայմանագիրը գործում է մինչև վաճառողի լիցենզիայի գործողության ժամկետի լրանալը, այնուամենայնիվ, սակագները և ծավալները սահմանվում են տարեկան կտրվածքով՝ պայմանագրի հավելվածներով: Հաշիվները ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Որպես գործնական բնույթի պարզեցում՝ Խումբը հասույթը ճանաչում է այն գումարով, որի չափով իրավունք ունի հաշիվ ներկայացնել, եթե այդ գումարն ուղղակիորեն համընկնում է մինչև տվյալ ամսաթիվը Խմբի կողմից պարտականության կատարման արդյունքում հաճախորդին փոխանցված արժեքի հետ:
Արտադրական հզորության վաճառք	Այս պայմանագրերի շրջանակում Ընկերությունն ունի հաճախորդներին անհրաժեշտության դեպքում Էլեկտրաէներգիա մատակարարելու հանձն առնված պարտականություն: Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցմանը զուգահեռ: Հաշիվները դուրս են գրվում ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցմանը զուգընթաց՝ հիմք ընդունելով անցած ժամանակահատվածը:
Այլ հասույթ	Այլ հասույթը ներառում է «Մատուցված ծառայություններ» հոդվածը: Հաշիվները ներկայացվում են ամսական կտրվածքով և սովորաբար ենթակա են վճարման 30 օրվա ընթացքում:	Որպես գործնական բնույթի պարզեցում՝ Խմբը հասույթը ճանաչում է այն գումարով, որի չափով իրավունք ունի հաշիվ ներկայացնել, եթե այդ գումարն ուղղակիորեն համընկնում է մինչև տվյալ ամսաթիվն ընկերության կողմից պարտականության կատարման արդյունքում հաճախորդին փոխանցված արժեքի հետ:

6. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Ձեռք բերված էլեկտրաէներգիա	2,918,242	2,109,680
Մաշվածություն և ամորտիզացիա	2,694,062	2,732,263
Գազի գծով ծախսեր	2,571,952	8,567,933
Աշխատավարձ	1,881,350	2,147,608
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	935,363	710,798
Նյութեր	314,833	344,056
Էլեկտրաէներգիա գծով ծախսեր	212,827	512,416
Անվտանգության ծառայության գծով ծախսեր	157,611	133,700
Վարձակալություն	4,151	2,584
Այլ	80,991	185,832
	11,771,382	17,446,870

7. Այլ եկամուտ

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Էլ.էներգիայի ծախսի փոխհատուցում	245,535	–
Գույքագրումից առաջացած եկամուտներ	185,692	132,387
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	73,206	–
Վարձակալությունից եկամուտ	93,179	86,228
Պաշարների վաճառքներից եկամուտներ	44,687	80,410
Պահուստի հակադարձում	49,586	57,823
Պաշարների արժեզրկումից կորուստի հակադարձում	–	13,695
Արտարժույթի փոխարկումից օգուտ	–	370
Այլ գործառնական եկամուտ	60,483	49,583
	752,368	420,496

8. Վարչական ծախսեր

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Աշխատավարձ	1,221,933	1,102,392
Մասնագիտական ծառայություններ	198,060	186,696
Անվտանգության ծառայություն	172,320	172,320
Հարկեր	144,982	57,501
Բանկային և ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	127,909	106,684
Մաշվածություն և ամորտիզացիա	64,521	77,699
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	34,233	–
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	30,864	73,570
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	19,649	20,606
Վարձակալության գծով ծախսեր	10,654	10,352
Էլեկտրաէներգիայի գծով ծախս	5,008	5,334
Հեռահաղորդակցություն	3,620	2,990
Այլ վարչական ծախսեր	87,333	173,852
	2,121,086	1,989,996

9. Այլ ծախսեր

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Փոխհատուցման ենթակա էլ.էներգիայի ծախս	213,136	–
Պարտադիր վճարներ	182,309	77,482
Հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի դուրս գրում	24,707	51,243
Տրված փոխառության դուրս գրում	20,000	63,702
Հնարավոր կորուստների գծով պահուստ	16,364	112,165
Լիցենզիա	15,300	15,300
Արտարժույթի փոխարկումից վնաս	13,507	4,880
Դուրս գրված պաշարներ	4,082	38,465
Աշխատավարձ	–	35,058
Այլ ծախսեր	56,742	66,055
Այլ ծախսեր	546,147	464,350

10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված		
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	1,472,539	1,938,564
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	1,213,764	–
Ֆինանսական եկամուտ	2,686,303	1,938,564
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ – տոկոսային ծախս	(1,957,546)	(2,589,005)
Չուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից	–	(1,073,939)
Ֆինանսական ծախս	(1,957,546)	(3,662,944)
Ֆինանսական եկամուտ, Շահույթում կամ վնասում ճանաչված	728,757	(1,724,380)

11. Շահութահարկ

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Շահութահարկի գծով ծախս	(310,230)	(257,901)
Հետաձգված հարկերի գծով ժամանակավոր տարբերությունների առաջացում և վերականգնում	(467,330)	1,586,593
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ	(777,560)	1,328,692

Հայկական ընկերությունների համար շահութահարկի դրույքաչափը 2024թ-ին կազմել է 18% (2023թ.-ին՝ 18%):

11. Շահութահարկ (շարունակություն)

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ (շարունակություն)

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

հազ. դրամ	2024թ.	%	2023թ.	%
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկը	8,875,805		(9,375,135)	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	(1,597,645)	(18)	1,687,524	18
Արտարժույթի տարբերություններից չհարկվող եկամուտ/ (չնվազեցվող ծախս)	134,262	1.5	(248,483)	2.7
Չնվազեցվող ծախսեր	685,823	7.8	(110,349)	1.2
	(777,560)	(8.7)	1,328,692	(14.1)

ա) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Հիմնական միջոցներ	–	–	(585,915)	(467,669)	(585,915)	(467,669)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	654,015	638,900	–	–	654,015	638,900
Պաշարներ	32,743	38,255	(2,367)	–	30,376	38,255
Տրամադրված փոխառություններ	226,764	302,806	–	–	226,764	302,806
Ոչ նյութական ակտիվներ	251	–	–	(83,200)	251	(83,200)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	53,324	50,559	–	–	53,324	50,559
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	182,029	27,212	–	–	182,029	27,212
Վարկեր և փոխառություններ	–	–	(490,725)	(250,938)	(490,725)	(250,938)
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	114,369	35,052	–	–	114,369	35,052
Պահուստներ	13,266	–	–	–	13,266	–
	1,276,761	1,092,784	(1,079,007)	(801,807)	197,754	290,977

11. Շահութահարկ (շարունակություն)**բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Դուստր ընկերության դուրսգրում	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հիմնական միջոցներ	(467,669)	(463,246)	(345,000)	–	(585,915)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	638,900	15,115	–	–	654,015
Պաշարներ	38,255	(7,879)	–	–	30,376
Տրամադրված փոխառություններ	302,806	(75,239)	803	–	226,764
Ոչ նյութական ակտիվներ	(83,200)	49,956	(33,495)	–	251
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	50,559	2,765	–	–	53,324
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	27,212	157,798	2,981	–	182,029
Վարկեր և փոխառություններ	(250,938)	(254,149)	(5,483)	8,879	(490,725)
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	35,052	93,702	28,233	13,848	114,369
Պահուստներ	–	13,596	330	–	13,266
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	–	(9,067)	(9,067)	–	–
Վարձակալության գծով պարտավորություններ	–	9,318	9,318	–	–
	290,977	(467,330)	(351,382)	22,727	197,754

11. Շահութահարկ (շարունակություն)**բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում (շարունակություն)**

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հիմնական միջոցներ	(1,386,281)	1,608,247	(689,635)	–	(467,669)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	574,698	64,202	–	–	638,900
Պաշարներ	21,876	16,379	–	–	38,255
Տրամադրված փոխառություններ	709,447	(406,641)	–	–	302,806
Ոչ նյութական ակտիվներ	(112,862)	29,662	–	–	(83,200)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	418,213	(367,654)	–	–	50,559
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(363,011)	390,223	–	–	27,212
Վարկեր և փոխառություններ	(519,373)	268,435	–	–	(250,938)
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	25,393	–	–	9,659	35,052
Բանկային ավանդ	(252)	252	–	–	–
Այլ ակտիվներ	16,512	(16,512)	–	–	–
	(615,640)	1,586,593	(689,635)	9,659	290,977

12. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Հոդատարածք և շենքեր	Շինություններ և մեխանիզմներ	Մեքենաներ և սարքավորումներ	Անավարտ շինարարու- թյուն	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	24,543,744	2,938,092	26,950,379	728,769	55,160,984
Ավելացումներ	132,710	-	113,331	2,097,352	2,343,393
Օտարումներ	(20,315)	(284)	(399,163)	(31,078)	(450,840)
Տեղափոխումներ	(48,822)	(22,859)	1,793,942	(1,722,261)	-
Կուտակված մաշվածության բացառում	(1,761,082)	(492,902)	(5,356,608)	-	(7,610,592)
Վերագնահատում	(637,060)	(449,693)	(5,622,118)	-	(6,708,871)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,209,175	1,972,354	17,479,763	1,072,782	42,734,074
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	22,209,175	1,972,354	17,479,763	1,072,782	42,734,074
Ավելացումներ	46,858	-	923,775	9,107,627	10,078,260
Օտարումներ	(182,248)	(98)	(216,938)	-	(399,284)
Հաշվեկշռային արժեքի բացառում օտարուման արդյունքում	(278,113)	(1,683,671)	(1,971,314)	(901,873)	(4,834,971)
Տեղափոխումներ	77,855	18,407	791,245	(887,507)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,873,527	306,992	17,006,531	8,391,029	47,578,079
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,176,113	440,417	3,495,517	-	5,112,047
Հաշվետու տարվա մաշվածության	608,486	55,810	1,951,575	-	2,615,871
Կուտակված մաշվածության բացառում	(1,761,057)	(492,902)	(5,356,633)	-	(7,610,592)
Օտարումներ	(2,971)	-	(13,965)	-	(16,936)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,571	3,325	76,494	-	100,390
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	20,571	3,325	76,494	-	100,390
Հաշվետու տարվա մաշվածության	715,029	95,361	1,801,619	-	2,612,009
Կուտակված մաշվածության բացառում	-	-	(50,304)	-	(50,304)
Կուտակված մաշվածության բացառում օտարուման արդյունքում	(47,950)	(74,268)	(161,330)	-	(283,548)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	687,650	24,418	1,666,479	-	2,378,547
Չուտ հաշվեկշռային արժեք					
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,188,604	1,969,029	17,403,269	1,072,782	42,633,684
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,185,877	282,574	15,340,052	8,391,029	45,199,532

2,258,535 հազար ՀՀ դրամ գումարով մաշվածության ծախսը՝ գրանցվել է վաճառքի ինքնարժեքի կազմում (2023թ-ին 2,552,263 հազար ՀՀ դրամ), 64,521 հազար ՀՀ դրամ գումարով մաշվածությունը ծախսը վարչական ծախսերի կազմում (2023թ.-ին 63,608 հազար ՀՀ դրամ) և 288,953 հազար ՀՀ դրամ գումարով մաշվածության ծախսը՝ այլ ծախսերի կազմում:

12. Հիմնական միջոցներ (շարունակություն)

«ՀրազԶԷԿ» ԲԲԸ-ի (Ընկերություն) հիմնական միջոցների վերագնահատում

Դեկավարությունը հանձնարարել էր «ԲԻ-ԴԻ-Օ Ըղվայգորի» ՓԲԸ-ին իրականացնել հիմնական միջոցների անկախ գնահատում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հիմնական միջոցների արժեքը գնահատվել էր գեղջված դրամական հոսքերի մեթոդով և կազմել էր 8,445,865 հազար ՀՀ դրամ, որը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդով օգտագործված ելակետային տվյալները (տես Ծանոթագրություն 2):

Ընկերության հիմնական միջոցների մեծամասնությունը մասնագիտացված բնույթ ունի և հազվադեպ է վաճառվում բաց շուկայում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի հանդիսանում բիզնեսի շարունակելիության մաս: Բացառությամբ փոխադրամիջոցների և որոշ հողատարածքների և շենքերի, որոնք վերագնահատվել են վերջերս շուկայում տեղի ունեցած գործառնությունների տվյալների կամ դիտելի շուկայական ելակետային տվյալների (օրինակ՝ համադրելի ապրանքների շուկայական գները) հիման վրա, նմանատիպ հիմնական միջոցների շուկան ակտիվ չէ Հայաստանի Հանրապետությունում և չի ապահովում համադրելի հիմնական միջոցների վաճառքների բավարար ծավալ՝ իրական արժեքը գնահատելիս շուկայական մոտեցումն օգտագործելու համար:

Հետևաբար, հիմնական միջոցների իրական արժեքը որոշվել էր օգտագործելով գեղջված դրամական հոսքերի մոտեցումը: Այս մեթոդը հաշվի է առնում Ընկերության ազատ դրամական հոսքերը ձեռնարկության արժեքը գնահատելու և պահանջվող ճշգրտումները կատարելու համար (այսինքն՝ զուտ շրջանառու կապիտալի և այլ գործառնական երկարաժամկետ ակտիվների հաշվեկշռային արժեքը), որպեսզի դուրս բերվի հիմնական միջոցների արժեքը:

Դրամական հոսքերի ստուգման ընթացքում կիրառվել են հետևյալ հիմնական ենթադրությունները

- Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է խելամիտ և օժանդակող ենթադրությունների հիման վրա, որոնք ներկայացնում են լավագույն գնահատականը այն տնտեսական պայմանների վերաբերյալ, որոնք գույություն կունենան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում,
- Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է Ընկերության կողմից հաստատված ամենավերջին ֆինանսական բյուջեների/կանխատեսական գնահատումների հիման վրա, սակայն չեն ներառել ապագա վերակառուցումից կամ ակտիվի արդյունավետության բարելավումից կամ կատարելագործումից առաջացող դրամական միջոցների գնահատված ապագա ներհոսքեր կամ արտահոսքեր,
- Հասույթը և ծախսերը ճշգրտվել են գնաճի համապատասխան դրույքների մասով,
- Կիրառվել է 19.06% գեղջման դրույք: Զեղջման դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը:

Մնացորդային լիկվիդացման արժեքը հաշվարկելիս կիրառվել են հետևյալ հիմնական ենթադրությունները. Մնացորդային արժեքը որոշվել է շուկայում գերակայող մետաղի գների հիման վրա:

Մետաղի քանակը որոշվել է տեխնիկական մասնագետների կողմից գնահատված միավորների տեխնիկական բնութագրերի հիման վրա:

Դեկավարությունը հանձնարարել է «ԲԻ-ԴԻ-Օ Ըղվայգորի» ՓԲԸ-ին իրականացնել «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ-ի, «Ձորագետ Հիդրո» ՍՊԸ, «Էրիկ» ՓԲԸ ՍՊԸ-ի և «ԱրևԷԿ» արևային էլեկտրակայան ՍՊԸ-ի հիմնական միջոցների անկախ գնահատում 2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Կազմակերպությունների հիմնական միջոցների մեծամասնությունը մասնագիտացված բնույթ ունի և հազվադեպ է վաճառվում բաց շուկայում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի հանդիսանում բիզնեսի շարունակելիության մաս: Բացառությամբ փոխադրամիջոցների և որոշ հողատարածքների և շենքերի, որոնք վերագնահատվել են վերջերս շուկայում տեղի ունեցած գործառնությունների տվյալների կամ դիտարկվող շուկայական ելակետային տվյալների (օրինակ՝ համադրելի ապրանքների շուկայական գները) հիման վրա, նմանատիպ հիմնական միջոցների շուկան ակտիվ չէ Հայաստանի Հանրապետությունում և չի ապահովում համադրելի հիմնական միջոցների վաճառքի բավարար ծավալ՝ իրական արժեքը գնահատելիս շուկայական մոտեցումն օգտագործելու համար: Ուստի, հիմնական միջոցների իրական արժեքը որոշվել էր օգտագործելով գեղջված դրամական հոսքերի մոտեցումը: Այս մեթոդը հաշվի է առնում Կազմակերպության ազատ դրամական հոսքերը ձեռնարկության արժեքը գնահատելու և պահանջվող ճշգրտումները կատարելու համար (այսինքն՝ զուտ շրջանառու կապիտալի և այլ գործառնական երկարաժամկետ ակտիվների հաշվեկշռային արժեքը), որպեսզի դուրս բերվի հիմնական միջոցների արժեքը:

12. Հիմնական միջոցներ (շարունակություն)

«ՀրազԶԷԿ» ԲԲԸ-ի (Ընկերություն) հիմնական միջոցների վերագնահատում (շարունակություն)

Դրամական հոսքերի ստուգման ընթացքում կիրառվել են հետևյալ հիմնական ենթադրությունները.

- ▶ Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է խելամիտ և օժանդակող ենթադրությունների հիման վրա, որոնք ներկայացնում են լավագույն գնահատականը այն տնտեսական պայմանների վերաբերյալ, որոնք գոյություն կունենան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում,
- ▶ Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները իրականացվել է յուրաքանչյուր Ընկերության կողմից հաստատված ամենավերջին ֆինանսական բյուջեների/կանխատեսական գնահատումների հիման վրա, սակայն չեն ներառել ապագա վերականգնումից կամ ակտիվի արդյունավետության բարելավումից կամ կատարելագործումից առաջացող դրամական միջոցների գնահատված ապագա ներհոսքեր կամ արտահոսքեր,
- ▶ Հասույթը և ծախսերը ճշգրտվել են գնաճի համապատասխան դրույքների մասով,
- ▶ Կիրառվել է յուրաքանչյուր ընկերության համար իրեն համապատասխանող գեղչման դրույք: Չեղչման դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը:

«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (Կազմակերպություն) հիմնական միջոցների վերագնահատում

Գնահատման արդյունքներով հիմնական միջոցների արժեքը կազմել է 30,002,168 հազար ՀՀ դրամ, որը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդով օգտագործված ելակետային տվյալները (տես Ծանոթագրություն 2): Հիմնական միջոցների արժեքը վերագնահատումից նվազել է 5,946,654 հազար ՀՀ դրամով, 8,519,911 հազար ՀՀ դրամ ճանաչվել է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս և 2,572,933 հազար ՀՀ դրամ՝ այլ համապարփակ եկամուտ:

Կիրառվել է 12.12% գեղչման դրույք: Չեղչման դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը,

13. Դուստր ընկերության օտարում

2024թ. հոկտեմբերի 17-ին «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» ԲԲԸ-ն որոշում է կայացրել «Էներգո Ինվեստ Յոլդինգ» ՓԲԸ-ում մասնակցությունը դադարեցնել վաճառելով այն «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ին:

Մինչ վաճառքը «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն ԲԲԸ»-ն իրականացրել է «Էներգո Ինվեստ Յոլդինգ» ՓԲԸ-ի վերահսկողությունը և այն ներառել է համախմբված ֆինանսական հաշվետվություններում: «Էներգո Ինվեստ Յոլդինգ» ՓԲԸ-ի արդյունքները համախմբվել են մինչև օտարման ամսաթիվը:

Տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերը մարվել են որպես հայտարարված տարեկան շահույթաբաժինների վճար փոխանցելու միջոցով:

13. Դուստր ընկերության օտարում (շարունակություն)

Ստորև ներկայացվում է օտարված դուստր ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը օտարման ամսաթվի դրությամբ՝

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք օտարման ամսաթվի դրությամբ
Ակտիվներ	
Հիմնական միջոցներ	4,602,896
Ոչ նյութական ակտիվներ և գույքիլ	194,845
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	50,374
Տրամադրված փոխառություններ	135,513
Ոչ ընթացիկ ակտիվներ	4,983,628
Պաշարներ	41,340
Տրամադրված փոխառություններ	20,014
Ընթացիկ հարկային ակտիվներ	3,088
Բանկային ավանդներ	284,543
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	343,509
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	493,609
Ընթացիկ ակտիվներ	1,186,103
Ընդամենը ակտիվներ	6,169,731
	Հաշվեկշռային արժեք օտարման ամսաթվի դրությամբ
հազ. դրամ	
Պարտավորություններ	
Վարկեր և փոխառություններ	107,811
Հետաձգված հարկային պարտավորություններ	351,380
Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորություններ	127,775
Վարձակալության գծով պարտավորություններ	42,548
Ոչ ընթացիկ պարտավորություններ	629,514
Վարկեր և փոխառություններ	543,427
Վարձակալության գծով պարտավորություններ	9,221
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,091,206
Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորություններ	29,077
Ընթացիկ հարկային պարտավորություններ	104,170
Ընթացիկ պարտավորություններ	2,777,101
Ընդամենը պարտավորություններ	3,406,617
Զվերահսկվող բաժնեմաս շուտ ակտիվների արժեք	257,833 2,505,283

13. Դուստր ընկերության օտարում (շարունակություն)

հազ. դրամ	Օգուտ դուստր ընկերության օտարումից
Դուստր ընկերության վաճառքի գին	7,253,718
Չուտ ակտիվների արժեք	2,505,283
Օգուտ դուստր ընկերության օտարումից	4,748,435

14. Տրամադրված փոխառություններ

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Ոչ ընթացիկ		
Տրամադրված փոխառություններ	4,137,844	7,968,285
Ընթացիկ		
Տրամադրված փոխառություններ	2,694,051	933,299
Ընդամենը տրամադրված փոխառություններ	6,831,895	8,901,584

Պայմանները և մարման ժամանակացույցը

Ստորև ներկայացված են տրամադրված փոխառությունների պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Արդյունա-վետ %	Սպասվող մարման տարի	2024թ.		2023թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով չապահովված փոխառություններ	ԱՄՆ դոլար	9.6%	2027	5,073,328	4,130,290	6,195,452	4,600,541
Գրավով չապահովված փոխառություններ	ԱՄՆ դոլար	7.95 %	2024	–	–	1,931,348	1,898,886
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	7%	2025	1,675,285	1,648,256	1,795,195	1,765,022
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	8.6%	2025	99,851	90,755	90,821	86,098
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	8.61%	2024	–	–	387,093	371,989
Գրավով չապահովված փոխառություններ	ԱՄՆ դոլար	1%	2025	198,529	197,653	–	–
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	9%	2025	17,411	17,130	16,058	15,788
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	8.4%	2025	777,074	740,257	–	–
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	10.18%	2026	7,554	7,554	–	–
Գրավով չապահովված փոխառություններ	ԱՄՆ դոլար	7.35%	2025	–	–	141,807	139,720
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	10.2%	2029	–	–	8,960	8,512
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	11%	2026	–	–	8,160	7,033
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	10.18%	2025	–	–	7,555	6,608
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	0%	2025	–	–	1,387	1,387
Ընդամենը տոկոսակիլ				7,849,033	6,831,895	10,028,874	8,901,584

ակտիվներ

Կապակցված կողմերին տրված գրավով ապահովված փոխառությունների համար ապահովություն են ծառայում ֆինանսական երաշխավորությունները: Պարտքային և արժույթային ռիսկերին խմբի ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և տրամադրված փոխառությունների գծով արժեզրկումից կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

15. Կանխավճարներ

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		
Կանխավճարներ հիմնական միջոցների գծով	3,083,416	5,931,061
	3,083,416	5,931,061
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով		
Այլ կանխավճարների գծով	-	2,000
	-	2,000
	3,083,416	5,933,061

Հիմնական միջոցների ձեռքբերման կանխավճարների գերակշիռ մասը վերաբերում է «Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ընկերության 2024-2033 թվականների ներդրումային ծրագրի ամենախոշոր ենթաբաղադրիչի՝ Արգել ՅԷԿ-ի թիվ 1 և թիվ 4 հիդրոէլեկտրակայանների փոխարինմանը, որոնց ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 25,200,000 հազար ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Փոխարինման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին և նախատեսվում է ավարտել համապատասխանաբար 2027 և 2028 թվականներին: Այդ աշխատանքների իրականացման համար 2024 թվականին համաձայն կապալի պայմանագրի տրամադրվել է 2,682,259 հազար ՀՀ դրամ կանխավճար:

Տրված կանխավճարների մնացյալ մասը՝ 401,158 հազար ՀՀ դրամ, իրենից ներկայացնում է «Էյչ Էներջի Սոլուշնս» ընկերության կողմից ջերմային էլեկտրակայանի կառուցման նպատակով հիմնական կապալառուին՝ «Վալդես Էներգետիկա» ՍՊԸ-ին տրված կանխավճարը:

16. Ներդրումներ

Ստորև բերվող աղյուսակում ասոցիացված ընկերություններում ներդրումների հաշվեկշռային արժեքի ընդհանուր վերլուծությունը:

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Ներդրումներ ասոցիացված ընկերությունում		
«Արտուկտ ՓԲԸ»	53,136	60,743
Այլ ներդրումներ		
«Մորնին» ՍՊԸ	15,000	15,000
«Գեբեսերտ» ՓԲԸ	30,355	30,335
«Կամսար» ՍՊԸ	125,308	-
	223,799	106,078

17. Պաշարներ

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Նյութեր	290,102	541,251
Պահեստամասեր	331,823	318,632
Պատրաստի արտադրանք	121,730	31,017
Այլ	88,406	90,147
Ընդամենը պաշարներ՝ սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով	832,061	981,047

18. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Այլ առևտրական դեբիտորական պարտքեր	2,319,293	873,045
Հաճախորդների հետ պայմանագրերի գծով առևտրական դեբիտորական պարտքեր	1,689,072	1,459,700
Այլ դեբիտորական պարտքեր	826,610	1,334,388
Ստացվելիք ԱԱՀ	586,513	148,756
	5,421,488	3,815,889

19. Բանկային ավանդներ

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Միջազգային էներգետիկ Կորպորացիա»-ն ներդրել է չորս դրամային ժամկետային ավանդ մեկ հայկական բանկում՝ 5.75 - 6.75 տարեկան տոկոսադրույքով՝ 1,234,384 հազար ՀՀ դրամ: Ավանդների մարման ամսաթիվն է 2025 թվականի հունվար ամիսը, տոկոսները վճարվում են ամսական կտրվածքով:

20. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Բանկային հաշիվների մնացորդներ	113,848	461,262
Դրամական միջոցները դրամարկղում	1,077	22
Միասնական հարկային հաշվի մնացորդ	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	114,925	461,284

Խմբի ենթարկվածությունն արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկերին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

21. Կապիտալ և պահուստներ

ա) Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության հիմնադիր փաստաթղթերում նշված կապիտալի անվանական գումարը:

Կանոնադրական կապիտալի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

Հաստատված և ամբողջությամբ վճարված կապիտալը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 7,504,726 հազար ՀՀ դրամ, որը կազմված է 4,892 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից (2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,814,628 հազար ՀՀ դրամ):

բ) Վերազնահատումից արժեքի աճ

Վերազնահատումից արժեքի աճը վերաբերվում է հիմնական միջոցների վերազնահատմանը:

21. Կապիտալ և պահուստներ (շարունակություն)

գ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության և վերջինիս դրուստր կազմակերպությունների բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են ՖՀՄՍ համաձայն պատրաստված Ընկերության և վերջինիս դրուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններում գրանցված համապատասխան չբաշխված շահույթի մնացորդով:

2024թ-ին բաժնետերերին հայտարարվել 11,647,565 հազար ՀՀ դրամ և վճարվել Է 7,050,000 հազար ՀՀ դրամ շահաբաժին, (2023թ-ին՝ վճարվել Է միջանկյալ շահաբաժին 4,597,564 հազար ՀՀ դրամ):

դ) Կապիտալի բաշխում

2024թ. ընթացքում կապակցված կողմերին ցածր տոկոսադրույքով տրամադրված փոխառությունների և երաշխավորությունների արդյունքում ճանաչված կապիտալի բաշխումը կազմում Է 54,657 հազար դրամ (2023թ-ին՝ 194,215 հազար դրամ):

ե) Կապիտալի կառավարում

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում Է ապահովել կապիտալի բավարար բազա իր գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում Է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Խմբի հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Խմբի գործառնական գործունեության դրամական հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այդ քայլերը՝ Խումբը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը չի փոփոխվել: Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջները: Խմբի պարտքը սեփական կապիտալի նկատմամբ հաշվետու ժամականաշրջանի վերջում հետևյալն էր:

հազ. դրամ	Սովորական բաժնետոմսեր	
	2024թ.	2023թ.
Ընդամենը պարտավորություններ	33,243,742	34,911,650
Հանած՝ դրամական միջոցներ և համարժեքեր	114,925	461,284
Չուտ պարտավորություններ	33,128,814	34,450,366
Ընդամենը կապիտալ	30,081,641	29,715,757
Չուտ պարտավորության հարաբերակցությունը սեփական կապիտալի նկատմամբ դեկտեմբերի 31-ին	1.10	1.15

22. Ստացված վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված Է տեղեկատվություն Խմբի ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Խմբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված Է Ծանոթագրություն 24-ում:

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	20,339,426	8,548,260
Գրավով չապահովված վարկեր և փոխառություններ	2,329,668	1,804,340
	22,669,094	10,352,600
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված բանկային վարկեր	3,168,526	17,991,633
Գրավով չապահովված վարկեր և փոխառություններ	2,368,688	112,074
	5,537,214	18,103,707
Ընդամենը պարտավորություններ	28,206,308	28,456,307

22. Ստացված վարկեր և փոխառություններ (շարունակություն)**Պայմանները և մարման ժամանակացույցը**

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանա- կան տոկոս	Սպասվող մարման տարի	2024թ.		2023թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	SOFR+ 4,70%	2025-2037	14,842,468	14,771,350	–	–
Գրավով չապահովված բանկային վարկ ՀՀ կառավարությունից	ՀՀ դրամ	18%	2041	3,682,596	2,616,647	4,266,633	2,919,002
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.5%	2033	2,613,752	2,613,752	2,815,642	2,815,642
Գրավով չապահովված այլ փոխառություն	Եվրո	7%	2025	1,682,218	1,682,218	1,804,340	1,804,340
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	8.5%	2027	1,491,180	1,491,180	–	–
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.87%	2025	991,813	991,813	305,363	305,363
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9%	2033	963,158	963,158	1,041,795	1,041,795
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9%	2033	962,687	962,687	1,050,041	1,050,041
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9%	2033	825,160	825,160	–	–
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	8.2%	2025	476,407	476,407	810,489	810,489
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.5%	2033	412,445	412,445	446,537	446,537
Գրավով չապահովված այլ փոխառություն	ԱՄՆ դոլար	7.66%	2025	225,507	222,831	–	–
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	11.1%	2025	188,304	176,660	78,490	70,652
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	5.9%	2027	–	–	3,343,099	3,343,099
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	5.5%	2025	–	–	1,120,747	1,120,747
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.95%	2024	–	–	2,070,724	2,070,724
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	10.7%	2024	–	–	137,390	102,560
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	7.25%	2024	–	–	121,871	121,871
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	10.2%	2026	–	–	44,270	40,371
Գրավով չապահովված այլ փոխառություն	ՀՀ դրամ	12%	2024	–	–	15,007	15,007
Գրավով չապահովված այլ փոխառություն	Եվրո	0%	2024	–	–	3,822	3,822
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	Euroibor +3%	2025	–	–	10,374,245	10,374,245
Ընդամենը տոկոսակիր պարտավորություններ				29,357,695	28,206,308	29,850,505	28,456,307

22. Ստացված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Պարտավորությունների փոփոխությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի համադրում

հազ. դրամ	Ստացված վարկեր և փոխառություն- ներ
Մնացորդը առ 1 հունվար 2024	28,456,307
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	
Մուտքեր վարկերից և փոխառություններից	20,432,837
Վարկերի և փոխառությունների մարում	(18,984,534)
Ընդամենը փոփոխություն ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	1,448,303
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքներ	(1,411,914)
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախս	2,292,077
Վճարված տոկոսներ	(1,927,227)
Դուրսգրում	(651,238)
Ընդամենը այլ փոփոխություններ	(286,388)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024	28,206,308
Մնացորդը առ 1 հունվար 2023	23,800,368
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	
Մուտքեր վարկերից և փոխառություններից	7,520,723
Վարկերի և փոխառությունների մարում	(4,899,413)
Ընդամենը փոփոխություն ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	2,621,310
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքներ	1,503,505
Այլ փոփոխություններ	
Տոկոսային ծախս	2,589,005
Վճարված տոկոսներ	(2,057,881)
Ընդամենը այլ փոփոխություններ	531,122
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023	28,456,307

23. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Հիմնական միջոցների համար վճարվելիք գումարներ	2,230,020	2,166,088
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1,896,862	1,296,137
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	256,101	380,594
Վճարվելիք այլ հարկեր	113,580	172,356
Ստացված կանխավճարներ ներդրումների վաճառքի գծով	–	708,000
Սպառված գազի համար վճարվելիք գումարներ	–	673,096
Այլ	7,963	39,472
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,504,526	5,435,743

Խմբի ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին և առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արժեզրկման կորուստները ներկայացված են Ծանոթագրություն 24–ում:

24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

(ա) Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ Խմբի ֆինանսական ակտիվները և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին:

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- ▶ Պարտքային ռիսկ,
- ▶ Իրացվելիության ռիսկ,
- ▶ Շուկայական ռիսկ:

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերոնշյալ յուրաքանչյուր ռիսկին Խմբի ենթարկվածության մասին, ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Խմբի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման Խմբի մոտեցումը: Հավելյալ քանակական բացահայտումներ ներկայացված են տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվության տարբեր հատվածներում:

(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները:

(ii) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների հետ կապված:

24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Խմբի ոչ մի հաճախորդ չունի արտաքին վարկային վարկանիշ: Բոլոր մնացորդները կորպորատիվ հաճախորդներ են և խումբը բոլոր հաճախորդների պարտքային ռիսկը ցածր է գնահատում: Խմբի հաճախորդներից ոչ մեկի ռիսկը նշանակալի չի աճել՝ սկզբնական ճանաչման պահից:

Խումբը չի պահանջում գրավ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ուներ 114,925 հազար ՀՀ դրամ գումարով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (2023թ.՝ 461,284 հազար ՀՀ դրամ), որոնք իրենցից ներկայացնում են պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափն այդ ակտիվների գծով:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր դրամական միջոցների և դրանց համարժեքների 84% պահվում է «Moody's Investor Services» գործակալության կողմից տրված “Ba3” և “Ba2” վարկանիշերով բանկերում: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկի մնացած 16% պահվում է վարկանիշ չունեցող բանկերում, որոնք սակայն դասված են ընդհանուր ակտիվներով տասը խոշորագույն հայկական բանկերի շարքին և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների և ավանդների գծով արժեքգրկումը չափվել է 12-ամսյա ակնկալվող պարքային կորուստների հիման վրա և արտացոլում է ռիսկին ենթարկվող գործիքների կարճ ժամկետները: Հիմք ընդունելով պայմանագրային կողմերի արտաքին վարկանիշները Խումբը իր դրամական միջոցների և դրանց համարժեքների և ավանդների պարտքային ռիսկը գնահատում է ցածր:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Խումբը չի համարում, որ այլ կողմերի պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար իր կողմից կնքված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը ապահովագրության պայմանագրեր են և հաշվառում է այդ պայմանագրերը ՖՀՄՍ 9-ին համապատասխան: Խմբի քաղաքականության համաձայն՝ ֆինանսական երաշխավորությունները տրամադրվում են միայն կապակցված կողմերի պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար: 2024թ.-ին Խումբը տրամադրել էր երաշխավորություններ որոշ բանկին՝ տասնինը կապակցված կողմերին տրամադրված վարկերի հետ կապված (տես Ծանոթագրություն 24-ում):

Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատելու համար Խումբը կիրառում է առևտրական դեբիտորական պարտքերի համար օգտագործվող մոտեցմանը նմանատիպ մոտեցում:

Տրամադրված փոխառություններ

Խումբը կապակցված կողմերին տրամադրում է գրավով չապահովված փոխառություններ: Փոխառություններից ոչ մեկը չունի արտաքին վարկանիշ: Խումբը չի ակնկալում, որ փոխառությունները չեն կատարի իրենց պարտականությունները:

24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

(iii) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում:

Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի հեղինակությունը վտանգելու:

Ենթարկվածությունը իրացվելիության ռիսկին

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Աղյուսակներում ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները ` առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության:

Որպես կանոն, Խումբը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության և տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ:

	Համախառն արժեք 31/12/2024	Ձևավորված պահուստ 31/12/2024	Համախառն արժեք 31/12/2023	Ձևավորված պահուստ 31/12/2023
<i>հազ. դրամ</i>				
Տրամադրված փոխառություններ	6,959,199	(127,304)	9,044,614	(143,030)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	5,480,083	(58,595)	3,841,506	(25,617)
Բանկային ավանդներ	1,234,384	–	202,961	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	114,925		461,284	
	13,788,591	(185,899)	13,550,365	(168,647)

24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)**(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

31 դեկտեմբեր 2024թ.

<i>հազ. դրամ</i>	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային և դրամական հոսքեր	Ցպահանջ	մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Գրավով ապահովված բանկային վարկեր	23,507,952	35,257,476	–	69,521	3,457,269	642,517	21,465,134	9,623,035
Գրավով չապահովված այլ փոխառու միջոցներ	4,698,356	6,268,731	–	–	2,848,763	–	–	3,419,968
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	4,390,946	4,390,946	–	4,390,946	–	–	–	–
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	451,920	7,394,854	–	–	43,604	–	5,103,648	2,247,602
	33,049,174	53,312,007	–	4,460,467	6,349,636	642,517	26,568,782	15,290,605

31 դեկտեմբեր 2023թ.

<i>հազ. դրամ</i>	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային և դրամական հոսքեր	Ցպահանջ	մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ Առևտրական և այլ	28,456,307	29,850,405	–	–	2,587,439	14,109,822	3,486,031	8,273,015
կրեդիտորական պարտքեր	4,555,387	4,555,387	–	5,435,743	–	–	–	–
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	194,736	3,957,579	–	–	929,285	87,085	2,023,950	917,259
	33,206,430	38,363,371	–	5,435,743	3,516,724	14,196,907	5,509,981	9,190,274

24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:

Ընկերության ընթացիկ ֆինանսական ակտիվների գումարը փոքր է անհրաժեշտ դրամական ատրահոսքերից, սակայն, վերջնական մայր ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել Խմբին իրացվելիության խնդիրների դեպքում և կրեդիտորների նկատմամբ իր պարտավորությունները կատարելու համար:

(iv) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երեք տեսակի ռիսկերից՝ ապրանքների գնի, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի: Շուկայական ռիսկը հիմնականում կապված է Խմբի համար սահմանված սակագների հետ և ազդում է Էլեկտրաէներգիայի ձեռքբերման գնի և այն գնի վրա, որը կարող է սահմանվել օգտագործողների համար՝սպառված Էլեկտրականության համար: Թեև Խումբը կարող է ազդել որոշ սահմանված սակագների չափերի վրա, սակագների չափերը գտնվում են վերահսկողության սահմաններից դուրս, և քաղաքական գործոնները նույնպես դեր են խաղում վերջնական սակագների վերաբերյալ որոշում կայացնելիս:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է արտարժույթների փոխարժեքի փոփոխության հետևանքով:

Խումբը ենթակա է արտարժույթային ռիսկի՝ ֆունկցիոնալ արժույթի և վաճառքների, գնումների և փոխառությունների արժույթների անհամապատասխանության հետևանքով: Վերոհիշյալ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով և Եվրոյով:

Ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արժույթային ռիսկին:

հազ. դրամ	Եվրոյով արտահայտված 2024թ.	Եվրոյով արտահայտված 2023թ.
Ստացված վարկեր և փոխառություններ	(7,459,420)	(17,263,949)
Դրամական միջոցներ	87,049	-
Տրամադրված փոխառություններ	4,327,943	1,765,022
Համախառն ենթարկվածություն	(3,044,428)	(15,498,927)
հազ. դրամ	Դոլարով արտահայտված 2024թ.	Դոլարով արտահայտված 2023թ.
Տրամադրված փոխառություններ	-	2,038,607
Դրամական միջոցներ	1,594	-
Կրեդիտորական պարտքեր	(852,973)	-
Ստացված վարկեր և փոխառություններ	(17,953,581)	(10,963,768)
Համախառն ենթարկվածություն	(18,804,960)	(8,722,201)

24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

	Միջին փոխարժեք 2024թ.	Միջին փոխարժեք 2023թ.	Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ 2024թ.	Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ 2023թ.
ՀՀ դրամ				
1 Եվրո	424,88	424,59	395,56	447,9
1 ԱՄՆ դոլար	392,66	392,54	413,89	404,79

2գայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31–ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի հնարավոր աճը Եվրոյի և դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնում կանխատեսվող վաճառքի և գնումների ազդեցությունը:

հազ. դրամ	Եվրո Շահույթ կամ վնաս
31 Դեկտեմբեր 2024թ. (10% փոփոխություն)	304,443
31 Դեկտեմբեր 2023թ. (10% փոփոխություն)	1,549,893

Դեկտեմբերի 31–ի դրությամբ ՀՀ դրամի 10% նվազումը Եվրոյի նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

հազ. դրամ	ԱՄՆ դոլար Շահույթ կամ վնաս
31 Դեկտեմբեր 2024թ. (10% փոփոխություն)	1,880,496
31 Դեկտեմբեր 2023թ. (10% փոփոխություն)	892,516

Դեկտեմբերի 31–ի դրո ւթյամբ ՀՀ դրամի 10% նվազումը ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ կունենար գումարային առումով նույն , սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

Տոկոսադրույքի Ռիսկը

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրամադրված փոխառությունների և վարկերի վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք) կամ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք):

24. Իրական արժեք և ռիսկերի կառավարում (շարունակություն)

(բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

<i>հազ. դրամ</i>	Հաշվեկշռային արժեք 2024թ.	Հաշվեկշռային արժեք 2023թ.
Հաստատուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական ակտիվներ	6,831,895	8,901,584
Ֆինանսական պարտավորություններ	(14,488,962)	(18,082,062)
Համախառն ենթարկվածություն	(7,657,067)	(9,180,478)
<i>հազ. դրամ</i>	Հաշվեկշռային արժեք 2024թ.	Հաշվեկշռային արժեք 2023թ.
Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ		
Ֆինանսական պարտավորություններ	(13,717,345)	(10,374,245)
Համախառն ենթարկվածություն	(13,717,345)	(10,374,245)

Իրական արժեքի զգայնության վերլուծություն ֆիքսված տոկոսադրույքով գործիքների համար

Խումբը չի հաշվառում հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունն ազդեցություն չէր ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Դրամական հոսքերի զգայնության վերլուծություն փոփոխուն տոկոսադրույքով գործիքների համար

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունը 100 բազային կետով կհանգեցնեի շահույթի կամ վնասի (առանց հարկերի) ավելացմանը (նվազմանը) ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

<i>հազ. դրամ</i>	Շահույթ կամ վնաս 100 բկ աճ	Շահույթ կամ վնաս 100 բկ նվազում
2024թ.		
Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ	(137,173)	137,173
Դրամական հոսքերի զգայնության (զուտ)	(137,173)	137,173
2023թ.		
Փոփոխուն տոկոսադրույքով գործիքներ	(103,742)	103,742
Դրամական հոսքերի զգայնության (զուտ)	(103,742)	103,742

25. Հանձնառություններ

Խումբը ֆինանսական երաշխավորության պայմանագրերը հաշվառում է ՖՀՄՍ 9-ի համաձայն: Ստանդարտի համաձայն պայմանագիրը սկզբնապես պետք է չափվի իրական արժեքով, իսկ հետագայում՝ հետևյալներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ին համապատասխան որոշված կորստի պահուստից և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Խմբի քաղաքականության համաձայն՝ ֆինանսական երաշխավորությունները տրամադրվում են միայն ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը երաշխավորել է իրեն կապակցված կողմերի բանկային վարկի պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարը և մնացորդը կազմում էր 12,174,332 հազար ՀՀ դրամ, (2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,957,580 հազար ՀՀ դրամ):

Պայմանագրի համաձայն երաշխավորողներն անդառնալիորեն և անվերապահորեն՝

- ▶ երաշխավորում են բանկի նկատմամբ Վարկային պայմանագրով ստանձնած բոլոր պարտականությունների ժամանակին կատարումը երաշխավորողների կամ փոխառուների կողմից,
- ▶ հանձն են առնում, որ եթե փոխառուն չվճարի որևէ գումար պայմանագրով սահմանված ժամկետում կամ դրա հետ կապված, երաշխավորողն անմիջապես ըստ պահանջի կվճարի այդ գումարն այնպես, ինչպես կաներ, եթե այն լիներ հիմնական պարտապանը:

26. Դուստր ընկերության ձեռքբերում

Դուստր ընկերություններ	Գրանցման երկիր	2024թ Սեփականություն/ Ձայնի իրավունք	2023թ Սեփականություն/ Ձայնի իրավունք
«Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%
«ԷյՋ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	64.59%	69.91%
«Փրոջեքթ Ֆայնըսս Հոլդինգ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

«Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն» ԲԲԸ-ն 2024թ.-ի ընթացքում վաճառել է «ԷյՋ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ-ում իր մասնաբաժնի 5.3%-ը, գործարքի գումարը կազմել է 708,000 հազար ՀՀ դրամ:

«Փրոջեքթ Ֆայնըսս Հոլդինգ» ՓԲ Ընկերությունը 2023թ հիմնադրել է «Ապեքս Թրեյդինգ» ՓԲԸ-ն և «Ֆոկուս գրուպ» ՓԲԸ-ն, որոնց կանոնադրական կապիտալը հիմնադրման պահին կազմում էր 11 հազար ՀՀ դրամ:

«Հրազդանի Էներգետիկ Կազմակերպություն» ԲԲԸ-ն 2023թ.-ի ընթացքում վաճառել է «ԷյՋ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ-ում իր մասնաբաժնի 30.09%-ը, գործարքի գումարը կազմել է 495,782 հազար ՀՀ դրամ:

27. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրության ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Խմբի հիմնական միջոցներն ապահովագրված են ֆիզիկական վնասից և գողությունից մինչև 45,700 հազար ՀՀ դրամի չափով:

27. Պայմանական դեպքեր (շարունակություն)

բ) Դատական վարույթներ

Խումբը ընդգրկված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ խմբի ֆինանսական վիճակի վրա:

գ) Շրջակա վիջավայրի պահպանություն

Խմբի գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով և կանոնակարգերով, որոնք կարգավորում են օդը և ջուրն աղտոտող նյութերի արտանետումը, թափոնների արտանետումը, գործածումը և պահպանումը: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբը բավարարել է շրջակա միջավայրի պահպանության հետ կապված կառավարության պահանջները, այդ իսկ պատճառով Խումբը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարությունը հնարավոր չի համարում նման պայմանական պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությունը զարգացման փուլում է և այդ օրենսդրության և վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են էական փոփոխությունների հանգեցնել ապագայում:

դ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է 3 տարի:

Այս հանգամանքները ՀՀ-ում կարող են առաջացնել այլ երկրների համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել համախմբված ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

28. Կապակցված կողմեր

ա) Վերահսկողություն

Խմբի մայր կազմակերպությունը «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն է և վերջնական հսկող անձն է պրն. Սամվել Կարապետյանը:

Խմբի վերջնական մայր կազմակերպությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում:

հազ. դրամ	2024թ.	2023թ.
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	360,901	567,036

28. Կապակցված կողմեր (շարունակություն)

գ) Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ

	Գործարքների գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբեր	
	2024	2023	2024	2023
Ապրանքների և ծառայությունների վաճառք				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ	5,527,612	8,242,300	77,835	115,373
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Մայր ընկերության այլ դուստր ընկերություններ	977,828	666,208	131,104	411,433
Տրամադրված փոխառություններ				
Մայր ընկերություն	2,352,782	2,426,402	3,663,909	3,663,909
Այլ կապակցված կողմ	24,311	337,129	260,778	5,237,675
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր				
Այլ կապակցված կողմեր	257,184	194,736	451,920	194,736
Տոկոսային եկամուտ				
Մայր ընկերություն	118,152	52,898	–	–
Այլ կապակցված կողմեր	1,354	1,058	–	–
Ներդրումների վաճառք	7,961,718	30,356	–	–
Այլ				
Այլ կապակցված կողմերին տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	3,437,274	3,957,580	7,394,854	3,957,580